



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ N 1428/02/10թ.
Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
Ն.Գրիգորյան
Կ.Սաղյան

Քաղաքացիական գործ N 1428/02/10թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

11-ին նոյեմբերի 2011թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

Նախագահությամբ՝ դատավոր
Դատավորներ՝

Ի.Կարապետյանի
Գ.Գրիգորյանի
Շ.Օհանյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Լիդա Ռուբենի Թովմասյանի ընդդեմ Մարատ Էդմարի Թովմասյանի և Մարտա Էդմարի Պողոսյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին, ըստ Մարատ Էդմարի Թովմասյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Լիդա Ռուբենի Թովմասյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին, ըստ Մարտա Էդմարի Պողոսյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Լիդա Ռուբենի Թովմասյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին, ըստ երրորդ անձ Գուրգեն Ռուբենի Թովմասյանի հայցի ընդդեմ Լիդա Ռուբենի Թովմասյանի և Մարատ Էդմարի Թովմասյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին, ըստ երրորդ անձ Արթուր Էդմարի Թովմասյանի հայցի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. ապրիլի 14-ի որոշման դեմ նոր երևան եկած հանգամանքներով հայցվոր Լիդա Թովմասյանի վճռաբեկ բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվոր Լիդա Թովմասյանը խնդրել է ճանաչել իրեն Ստեփանակերտ քաղաքի Բրյուսովի փողոցի 1-ին նրբանցքի /նախկին Արմենավան/ թիվ 5 հասցեում գտնվող բնակելի տան և կից՝ 550 քառակուսի մետր մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Մարատ Թովմասյանը, երրորդ անձ Գուրգեն Թովմասյանը, երրորդ անձ Կարինե Ավետիսյանը, երրորդ անձ Արթուր Թովմասյանը, Մարտա Թովմասյանը տան և տնամերձ հողամասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջով հակընդդեմ հայցային դիմումներ են ներկայացրել:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2011թ. փետրվարի 14-ի վճռով Լ.Թովմասյանի հայցը բավարարել է մասնակիորեն՝ նրան ճանաչելով Ստեփանակերտ քաղաքի Բրյուսովի փողոցի 1-ին նրբանցքի /նախկին Արմենավան/ թիվ 5 հասցեում գտնվող բնակելի տան և կից՝ 550 քառակուսի մետր մակերեսով տնամերձ հողամասի 7/18 բաժնեմասով ժառանգությունն ընդունած ժառանգ:

Մարատ և Մարտա Թովմասյանների հակընդդեմ հայցերը բավարարել է մասնակիորեն՝ նրանց ճանաչելով Ստեփանակերտ քաղաքի Բրյուսովի փողոցի 1-ին նրբանցքի /նախկին Արմենավան/ թիվ 5 հասցեում գտնվող բնակելի տան և կից՝ 550 քառակուսի մետր մակերեսով տնամերձ հողամասի 1/9 բաժնեմասով ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երրորդ անձ Գուրգեն Թովմասյանի հայցը բավարարել է մասնակիորեն՝ նրան ճանաչելով Ստեփանակերտ քաղաքի Բրյուսովի փողոցի 1-ին նրբանցքի /նախկին Արմենավան/ թիվ 5 հասցեում գտնվող բնակելի տան և կից՝ 550 քառակուսի մետր մակերեսով տնամերձ հողամասի 7/18 բաժնեմասով ժառանգությունն ընդունած ժառանգ:

Կարինե Ավետիսյանի և Արթուր Թովմասյանի հայցերը մերժել է:

Լիդա Թովմասյանի, երրորդ անձ Արթուր Թովմասյանի լիազոր ներկայացուցիչ և գործով երրորդ անձ Կարինե Ավետիսյանի վերաքննիչ բողոքների հիման վրա, վերանայելով նշված դատական ակտը, ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2011թ. ապրիլի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները մերժել է՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011թ. փետրվարի 14-ի վճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ նոր երևան եկած հանգամանքներով վճռաբեկ բողոք է բերել Լիդա Թովմասյանը:

Գերագույն դատարանը 2011թ. հոկտեմբերի 6-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունել է դատարանի վարույթ և հարուցել նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերողը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշումն ենթակա է վերանայման և բեկանման, քանի որ գործով առկա են նոր երևան եկած հանգամանքներ, որոնք էական նշանակություն ունեն գործի լուծման համար: Բողոք բերողը նշում է, որ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործի քննության ավարտից հետո իրեն հայտնի է դարձել, որ իր հոր՝ Ռուբեն Թովմասյանի մահից հետո մայրը՝ Ռիմա Թովմասյանը, ժառանգությունն ընդունելու համար նախատեսված վեցամսյա ժամկետում՝ 2005թ. մարտի 10-ին, նոտարական գրասենյակին դիմում է ներկայացրել՝ ժառանգությունից հոգուտ դստեր՝ Լիդա Թովմասյանի հրաժարվելու մասին:

Բողոք բերողը գտնում է, որ եթե նշված փաստը հայտնի լիներ գործի քննության ընթացքում, ապա ժառանգական գույքից իրեն հասանելիք բաժինը կկազմեր ոչ թե ժառանգական գույքի 7/18-րդ բաժինը, կամ 76.3 քառակուսի մետրը, այլ՝ 9/18-րդ բաժինը, կամ 98 քառակուսի մետրը:

Ըստ բողոք բերողի՝ դատարանը ժառանգական գույքը բաժանել է հետևյալ հաշվարկով. բողոք բերողի հոր՝ Ռուբեն Թովմասյանի մահից հետո գույքի կեսի /98 քառակուսի մետր/ նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերել մայրը՝ Ռիմա Թովմասյանը: Մնացած գույքը բաժանվել է երեք ժառանգների՝ բողոք բերողի մոր՝ Ռիմա Թովմասյանի, բողոք բերող Լիդա Թովմասյանի և սույն գործով երրորդ անձ՝ Գուրգեն Թովմասյանի միջև հավասար չափաբաժիններով, յուրաքանչյուրին՝ 32.7 քառակուսի մետր չափով: Ռիմա Թովմասյանի մահից հետո նրան պատկանող չափաբաժինը՝ 98 քառակուսի մետր+32.7 քառակուսի մետր=130.7 քառակուսի մետրը բաժանվել է հավասար չափաբաժիններով երեք ժառանգների՝ Լիդա Թովմասյանի, Գուրգեն Թովմասյանի և Էդմար Թովմասյանի ժառանգների՝ Մարատ և Մարտա Թովմասյանների միջև՝ յուրաքանչյուրին՝ 1/3 կամ 43.6 քառակուսի մետր չափաբաժնով:

Սույն գործով առկա նոր երևան եկած հանգամանքներով պարզվում է, որ Ռուբեն Թովմասյանի մահից հետո Ռիմա Թովմասյանն իր բաժնից հրաժարվել է հոգուտ բողոք բերողի, ինչն էական նշանակություն ունի գործի ըստ էության ճիշտ լուծման համար:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1. Ռուբեն Ջավադի Թովմասյանն ու Ռիմա Շիրինի Ղազարյանը /ամուսնությունից հետո՝ Թովմասյանը/ գրանցված ամուսնության մեջ էին 1952թ. ապրիլի 8-ից:

2. Վեճի առարկա հանդիսացող տունը և տնամերձ հողամասը Ստեփանակերտ քաղաքի տեխնիկական գույքագրման բյուրոյում 1991թ. մայիսից գրանցված էին որպես Ռուբեն Թովմասյանի անձնական սեփականությունը:

3. Ռուբեն Թովմասյանը մահացել է 2004թ. սեպտեմբերի 11-ին:

4. Ռուբեն Թովմասյանի մահից հետո տանը շարունակել են բնակվել կինը՝ Ռիմա Թովմասյանը, դուստրը՝ Լիդա Թովմասյանը և որդին՝ Գուրգեն Թովմասյանը:

5. Ռուբեն Թովմասյանը կտակել է իր գույքը դստերը՝ Լիդա Թովմասյանին, որը, սակայն, ըստ կտակի ժառանգությունն ընդունելու համար օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում ժառանգության բացման վայրի նոտարին ըստ կտակի ժառանգությունն ընդունելու մասին դիմում չի ներկայացրել:

6. Ռիմա Թովմասյանը մահացել է 2008թ. հունվարի 12-ին:

7. Էդմար Ռուբենի Թովմասյանը մահացել է 2008թ. հունվարի 20-ին, որի առաջին հերթի ժառանգներ Մարատ և Մարտա Թովմասյանները 2008թ. օգոստոսի 18-ին ժառանգության բացման վայրի նոտարին գրավոր դիմում են ներկայացրել իրենց տատի՝ Ռիմա Թովմասյանի մահից հետո թողած ժառանգությունն ընդունելու մասին:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով սույն բողոքը նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն

եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց,...և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Հողվածի մեկնաբանությունից հետևում է, որ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթը հանդիսանում է քաղաքացիա-դատավարական իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների և օրենքով պահպանվող ազատությունների պաշտպանության լրացուցիչ երաշխիք: Այս ինստիտուտի առանձնահատկություններից մեկն այն է, որ դատական ակտի վերանայման հիմք է հանդիսանում ոչ թե նյութական կամ դատավարական օրենքի խախտումը կամ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի սխալ գնահատումը դատարանի կողմից, այլ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո գործի համար էական նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքների երևան գալը, որոնք հայտնի չէին կողմերին և դատարանին՝ դատական ակտը կայացնելուց առաջ: Նոր երևան եկած հանգամանքների՝ գործի լուծման համար էական նշանակություն ունենալու հարցը դատարանը լուծում է, հաշվի առնելով յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքները: Այս հարցում որոշիչ չափանիշ է հանդիսանում գործի ելքի վրա ազդելու նոր երևան եկած հանգամանքների ունակությունը: Գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներն այն փաստերն են, որոնք ունեն էական նշանակություն կողմերի միջև գոյություն ունեցող իրավահարաբերությունների որակման համար, գոյություն են ունեցել գործի քննության պահին, հայտնի չեն եղել գործին մասնակցող անձանց, կամ հայտնի են եղել, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, կայացվել է այլ դատական ակտ, քան կկայացվեր, եթե դրանք տրամադրված լինեին դատական ակտը կայացնող դատարանին:

Գործի նյութերով հաստատված է, որ Ռուբեն Թովմասյանը և Ռիմա Թովմասյանը գրանցված ամուսնության մեջ են գտնվել 1952թ.-ից: Ռուբեն Թովմասյանը մահացել է 2004թ. սեպտեմբերի 11-ին, իսկ Ռիմա Թովմասյանը՝ 2008թ. հունիսի 12-ին: 2004թ. հուլիսի 30-ին Ռուբեն Թովմասյանը կտակ է թողել, որով իրեն պատկանող Արմենավան 5 հասցեում գտնվող տունը և Պավլովի 7 հասցեում գտնվող ավտոտնակը կտակել է աղջկան՝ Լիդա Թովմասյանին: Մակայն, ըստ կտակի ժառանգությունն ընդունելու մասին համապատասխան նոտարական գրասենյակ Լիդա Թովմասյանը չի դիմել:

Վճռաբեկ բողոքին կցված Ռիմա Թովմասյանի դիմումի ուսումնասիրությունից պարզվում է, որ նա իր ամուսնու մահից հետո ժառանգական գույքի իր բաժնից հրաժարվել է հօգուտ դստեր՝ սույն գործով վճռաբեկ բողոք բերող Լիդա /Մեյիսյանի/ Թովմասյանի:

Նշված դիմումի առկայության մասին բողոք բերողն իմացել է գործով դատաքննության ավարտից հետո, ուստի, դիմումը ներկայացված չէր ստորադաս դատարաններին: Մինչդեռ, եթե ստորադաս դատարաններին հայտնի լիներ այս հանգամանքի առկայության մասին, ապա գործի լուծումը՝ կապված ժառանգությունն ընդունած ժառանգների բաժինները հստակ որոշելու հետ, կստանար այլ ելք:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ բողոքի քննության արդյունքում դատարանը, պարզելով նույն օրենսգրքի 196-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայությունը, որոշում է կայացնում նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման մասին:

Գերագույն դատարանը, հիմք ընդունելով վերը շարադրված պատճառաբանությունները, համարում է, որ բողոք բերողի փաստարկները, որոնք գործի լուծման համար ունեն էական նշանակություն, հիմնավոր են, և գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. ապրիլի 14-ի որոշումը նոր երևան եկած հանգամանքներով ենթակա է վերանայման:

Դատական ակտը բեկանելիս՝ Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև սույն գործով ժառանգների բաժինները հստակ որոշելու համար նոր քննության անհրաժեշտությունը:

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի «է» կետի երկրորդ ենթակետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են...ֆիզիկական անձինք երևան եկած նոր հանգամանքների հետևանքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ գանգատներով: Գերագույն դատարանը, հիմք ընդունելով նշված օրենքի դրույթը, գտնում է, որ բողոք բերողի կողմից մուծած 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ պետական տուրքը ենթակա է վերադարձման:

Այսպիսով, Գերագույն դատարանը վերը նշված հիմքերի առկայությունը բավարար է համարում՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի երկրորդ կետի ուժով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. ապրիլի 14-ի որոշումը վերանայելու և գործը ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան նոր քննության ուղարկելու համար՝ գործով առկա բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննելու և գնահատելու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ, 253-րդ հոդվածի երկրորդ կետով, 256-րդ հոդվածով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Լիդա Ռուբենի Թովմասյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. ապրիլի 14-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:
2. Լիդա Ռուբենի Թովմասյանի կողմից 06.09.2011թ. N 110906008535010 անդորրագրով «Արցախբանկ» ՓԲԸ մուծած 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ պետական տուրքը վերադարձնել:
3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

| | |
|--------------------|---------------------|
| ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ | Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ |
| ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ | Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ |
| | Շ.ՕՀԱՆՅԱՆ |